

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie مجموعه علوم

ԽՄԲԱԳՐԱԳԵՏ - ՏՆՕՐԻՆ

Ղ. ԲՈՂԱՏ

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 38

1898 ԴԵԿՏԵՄԲԵՐ 12

Ամեն տողի համար Տարեկան կանխիկ 50 դանեկան, վեցամսեայ 26, իսկ եռամսեայ, 13 դանեկան: Օտար երկրաց համար տարեկան կանխիկ 15 ֆրանկ: Թղթատարի ծախքը խմբագրութեան կը վերաբերի: Հասը 40 փարայ: Գաւառներէ բօսքի բուլ ալ կ'ընդունուի 100 դրուէի տեղ 105 դրուէ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մ. ԳԱԼԵՆՏԵՐ.—Հազուակու պատշաճութիւն:

ՄԱՏԱԹ.—Բժշկական նօթեր. Դալկախտ (Սարքլըզ):

Ղ. ԲՈՂԱՏ.—Շերամաբուծութիւնը Բասթէօնտէն դրութիւնով. Մակարուծային փոխանցիկ հիւանդութիւններ:

Գ. ՇԱՀԻՆՆԱՆ.—Մանկապետ Մանուսայադործութիւնը:

Ղ. ԲՈՂԱՏ.—Գետնախնձորը երկար ատեն պահելու միջոցները:

Ղ. ԲՈՂԱՏ.—Ճարտարարուեստական. Ներկարարութիւնը:

Ղ. ԲՈՂԱՏ.—Հարցումներ և Պատասխան:

Տ. ՊՕՋԱՃԵԱՆ.—Գիտական խնդիրներ:

Ազգային լուրեր:

Թղթակցութիւն, Հանելուկ, Ազգ. Կըն.

Հատը 40 փարայ

ՏՊԱԳՐ. ԳՐԻԳՈՐ Պ. ԳԱՅՍԵՐԵԱՆ.

Կ. Պոլիս, Պապ. Այի Ճատտէօի, Թիւ 4

Դիւրաւ գըտայ այս անգամ քեզ.
Ըսէ՛ տեսնեմ՝ դու «պատգամ» չե՞ս.
Կաղմուած ես վեց գըրերով
Կրնամ բաժնել վանկերդ շուտով:
Առաջինդ «պատ» բառ եռատառ,
Չայն գտնելը չէ շատ դժուար.
Իսկ վերջինըդ է պիտանի՝
Ամէն բանի մէջ գործածուի:
Չեմ տեսած չէնք մ'ուր չըլլայ «գամ»
Կենացըս մէջ գէթ մի անգամ
Քարաչէն թող ըլլայ հող չէ,
Է՛հ, միթէ հոն փայտ ու սկաս է.
Ամբողջութեանդ մէջ կը գտնամ
Տէրունական մի հրաման:

ՁԱՊԵԼ Յ. ԵԱԶԸՃԵԱՆ

Հանելուկդ կարգաւով,
Խորհելու պէտք չզգալով,
Ըսի, այդ չէ դժուար շատ,
Ահա՛ դէմքս, քովըս «պատ»:
Երկրորդդ «գամ»ն է ահա,
Չեմ պարծիր իբր տղայ.
Այլ ձեր խօսքն իբր «պատգամ»
Ընդունելով, այս անգամ
Փոխանակ հանելուկի
Կըսպասեմ իմ նուէրի,
Ձի ահա՛ հինգերորդըն է
Որ մեր պայման լրացնէ:

ՆԵԿՏԱՐ Ա. ԴԵՐՁԱԿԵԱՆ

Լուծած են նաև յաջողակութեամբ և տանաւորով.

Պէզճեան Մայր-Վարժարանի ուսանողներէն
Պ. Պ. Յակոբ Գափուճեան. — Միհրան Զ.
Գարաբաշեան. — Ստեփան Գ. Ստեփանեան:
Իսկ Պ. Վահէ Երէցեան առանց ոտանաւորի,
ինչպէս և Գարթալէն Ե. Յ. Էթմէքճեան է՞՞:

Հ. Ս. Տէրվիշեանի ՀՆՏԵՐՈՊԱԿԱՆ
ՆԱԽԱԼԵԶՈՒԹՅԱՆ ԳՐԵՐՆՈՒԼԵԶՈՒ ՀԱՆ-
դէսին ամբողջական հաւաքածոյին պէտք
ունեցող բանասէրներն ու գրասէրները
կրնան խմբագրութեանս դիմել: Աւե-
լորդ է հոս առաջ բերել այդ երկու հե-
ղինակութեանց արժէքը. ամէն բանա-
սէրի ու գրահմուտի համար անհրաժեշտ
գործեր են:

Գիները խիստ դիւրամատչելի են.
Փութացէ՛ք առիթէն օգտուել մինչև մէկ
ամիս, որովհետև օրինակները սպառած
են:

ՏԲԴ. Բ. ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ

ՄԱՆԿԱԲԱՐՁ-ԿՆԱԽՏԱԲՈԾԺ, ՄԱՍՆԱԳԷՏ

ՋՂԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ

Որ իր երկար փորձառութեամբ ծա-
նօթ է, մի քանի տարիէ ի վեր ուսում-
նասիրութիւններ կատարելէ զկնի ի Բա-
րիզ, դարձած է մայրաքաղաքս, հաս-
տատելով իր բնակութիւնը Բերա Մէք-
թէպ-Պայրամ-Փողոց, Թիւ 29, ուր ամէն
օր կէս օրէ վերջ հիւանդ կ'ընդունի:
Մասնաւորապէս կ'դարմանէ կնոջական և
ջլային ամէն հիւանդութիւններ: ԵՇ.
նոյն ժամուռն ձրի կը դարմանէ կարօտ-
եալները: Ելեքտրաբուժում ամէն տե-
սակներովը, մասնաւոր քննութիւն Ռէ-
օնթկէնեան մեքենայով:



ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie معجم علوم

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ - ՏՆՕՐԷՆ


Ղ. ՌՈՒԱՑ

Բ. ՇՐՁԱՆ

ԹԻԻ 38

1898 ԴԵԿՏԵՄԲԵՐ 12

ՀԱԳՈՒԵԼՈՒ ՊԱՏՇԱՃՈՒԹԻՒՆ



Գուցէ քիչ մը ուշ մնացինք հրապարակաւ մեր շնորհակալիքները յայտնելու առ Ղ. Բոլատ էֆ. որ Հանրագիտական հանրութեան ամէն կերպով օգտակար եւ շահաւէտ ընելու հաստատակամութեամբ եւ գովելի կորուլով մը ամէն ջանք ի գործ կը դնէ մեծ մեծ զոհողութիւններով, որու նշանակիչ ապացոյցներէն մին կրնայ նկատուիլ իրաւաւամբ, իր այս վերջի ձեռնարկ՝ Կանանց վայելչազարդութեան Բաժինը, որով կը փութայ գործնականապէս սատարել կարգ մը կանացի ձեռարուեստներով իրենց ապուստը ճարտչներու, եւ հայ ընտանեաց հագուելու պատշաճութեան վերաբերեալ ամէն կերպ խնայողական, վայելուչ, եւ ժամանակին յարմարագոյն միջոցները ցոյց տալով, որ այս մասին արուեստագիտական տեսակէտով, մեր հետ ունեցած խորհրդակցութիւնները բանիմաց ու շահեկան զանեցով, չի վաւանիր յանուն հայ իգական սեռի նիւ-

թական եւ բարոյական յառաջդիմութեան այդ մեծ պակասը լրացնելու: Շնորհակալութիւն նաեւ այն վստահութեան համար, զոր Բոլատ էֆ. ցոյց կուտայ, այս ճիւղի խմբագրական հոգը մեզի յանձնելու պատիւն ընելով:

Այժմ դառնանք Հանրագիտակի Պատմութեան ընթացողներուն: Թերեւս ոմանք կարծեն թէ Բոլատ էֆ. ի հետ ձեռք ձեռքի տուած նպատակ ունինք նորաձեւութեան կործանարար շուայլութիւնը տարածել մեր ընտանիքներուն մէջ, թեթեւ ու սալօնի կիներու թիւն աւելցնել, առանց իրական ու շօշափելի օգտակարութիւն մը մատուցանելու: Անոնք որ այս թիւր կարծիքը ունին, չ'ոտ ու չ'ատ կը սխալին: Մենք այդ նպատակին չպիտի ծառայենք երբեք. այդ կարծիքը մեր միտածումներուն հակառակն է:

Եւ արդէն իսկ Բոլատ էֆ. «նորաձեւութիւն» բառը բարեփոխելով յոյժ յարմարագոյն իմաստով «վայելչազարդութիւն» կ'անուանէ զայն, որ աւելի նպատակին կը ծառայէ եւ թիւրիմացութեան տեղի չի տար:

Մեր ընթերցողը հինները թո՛ղ ներեն մեզի պղծիկ տեսութիւն մ'ընենք հոս : Կ'ուզենք նորաձեւութեան մասին կազմուած թիւր կարծիքները ցրել, որոնք մեր ռամիկ ժողովրդեան դատակարգին մէջ չափ տարածուած են :

Յայտնի է թէ հագուստը քաղաքակրթութեան ծնունդ է : Վայրենիները զգեստի վրայ գաղափար չունին : Թերակիրթ ժողովուրդները իրենց մոտաւորական զարգացման համեմատ աւելի կամ նուազ նախնական ու անշնորհք ըզգեցում մը ունին : Իսկ քաղաքակիրթ ազգերը՝ հսկայաբայլ յառաջդիմելով, զգեցումի արուեստին մէջ այսօրուան հիանալի արդիւնքը ձեռք ձգած են : Ո՞վ կրնայ հակառակը պնդել երբ բաւական չեն պէտք է ջանանք մեր արտաքին կեանքը բարելաւել, և պատշաճութեան բարեկրթութեան վրայ հիմնուած կենցաղ մը վարել : Շատ ճշմարիտ է այն խօսքը թէ քաղաքակիրթութիւնը հագուստէն կ'սկըսի : Ուրեմն զգեցումը կրնայ աստիճանաւոր ըլլալ մեր զարգացման : Ընկերական մարդը անհրաժեշտօրէն պէտք է նկատի առնէ պատշաճութեան օրէնքները իր աշխարհիկ յարաբերութեանց մէջ : և միթէ հագուստը, այսինքն վայելուչ զգեցումը ընկերական պատշաճութեանց մէջ առաջին տեղը չի բռնէր : քաղաքակիրթ սղգերը իրողամբ մեծ կարեւորութիւն կուտան անոր, օր ըստ օրէ նրբացնելով զայն, նրբացում մը որ ճաշակի ու վայելչութեան պահանջներուն վրայ հիմնուած է, ո՛չ թէ այլանդակութեան : Իսկ մեր մէջ զարգացումի պոկասէն չափ քիչերու ծանօթ է հագուստը պատշաճութիւնը, թո՛ղունք ներբացումը : Իրաւ է որ նորաձեւութիւնը շատոնց մուտ գտած է մեր մէջ, սակայն

իսկապէս իր նպատակին չի ծառայեր, որով չափ անգամ անտեղի ու անհաճոյ վէճերու ծնունդ կուտայ մեր ընտանիքներու մէջ : Ասիկա կը նշանակէ թէ նորաձեւութեան դերը դեռ լաւ չէ բմբռնուած մեր մէջ, նորութեան հետեւած ըլլալու և անիմաստ ցուցամարտութեան մը գոհացում տալու համար է միայն : Ո՛չ, նորաձեւութեան վրայ այդ ըմբռնումը սխալ է, անիկա պէտք է նկատուի զուտ ընկերական պատշաճութիւն մը, որ ամէն պատշաճութեանց պէս ծայրայեղութեան չմղուելով, պէտք է նպատակ ունենայ մեր արտաքինին անսթեղութեամբ, վայելուչ ու շնորհալի երևոյթ մը տալ, սիրունութեան ու բարեկրթութեան հով մը, վերջապէս քաղաքակիրթ մարդու մը տեսնել : Պէտք է խորապէս համոզուինք որ զգեցումի պատշաճութիւնը բարեկրթութեան տարրական պահանջներէն մին է, զոր չենք կրնար արհամարհել, թո՛ղունք գեղեցկագիտական կողմը :

Բայց ցաւալի է որ այն նորաձեւութիւնը, զոր արեւմտեան քաղաքակիրթ ազգերէն կ'ընդունինք այսօր, այն ալ ճշդիւ չենք դործադրեր դժբաղդաբար : քանհաճօրէն կը հետեւինք անոր, առանց գիտնալու թէ ի՞նչ կերպով կը գործադրուի ծաղկեալ ազգերու մէջ :

Օրինակի համար Եւրոպայի մէջ, լուր օր մը չէք տեսներ ո՛ր և է կին մը, որ արտակարգ արդուզարդ մ'ըրած ըլլայ, ինչպէս նաեւ այր մը : Ամբան եղանակին այր մը փախաթէ գլխարկ մը դրած է ու «ալիակայ» թիկնոցակ մը կը կրէ, բայց կերակի օրը զինքը պիտի տեսնէք եկեղեցին՝ բարձր գլխարկով ու ֆասօնէ թիկնոցով, գիշերուան երեկոյթի մը մէջ սև ասուիէ թիկնոցով և վերջապէս հանդիսարարի մը մէջ սև հանդիսագեղատու : Նոյնպէս լուր օրուան մէջ պիտի տեսնէք որ կինը կամ մանկամարդ-

օրիորդը փսիաթէ գլխարկին վրայ հա-
ղիւ երկզէ վարդակապ մը զետեղած է,
իրանն ամփոփելով պարզ բայց վայելուչ
սուկանի մը կամ իրանազգեստի մը մէջ
և անդարդ քղանցքով մը վերջացնելով,
թո՛ղ թէ թատրոնին օթեակը կամ երե-
կոյթի մը սրահին մէջ տարբեր կերպով
կը հագուէ։ Զի մոռնա՜նք ըսել թէ լուր
օրուան մէջ չափազանց արդուղարդով
կին մը փողոցը տեսնուած առե՛ն ան-
պարկեշտ մակդիրով կը մկրտուէ։

Դանք հիմա մերիններուն։ Մեր կի-
ները կարեւորութիւն չեն տար հագուստ-
ները իրենց պարագային համեմատ կրե-
լու մասին։ Այցելութեան, երեկոյթի,
պարահանդէսի հագուստները անխտիր
կը հագնին իրարու տեղ. պատշաճ զգե-
ցումի պէտքը ասոր համար է որ մոտ-
նանիչ կ'ընենք հոս։

Ամէն օր ցաւով կը տեսնենք Բերայի
ու Պոլսոյ մայրներուն վրայ երեցող հայ
կիներու արդուղարդերը, որոնք կա՛ր-
ծե՞ս պարահանդէսէ մը՝ դիմակաւորնե-
րու վերադարձը կը պատկերացնեն։ Ի՛նչ
արդուղարդ և ի՛նչ նորաձևութեան ընա-
րութիւն։ Ի՛նչ անճաշակ գլխարկներ,
Աստուած իմ, կերպասի ի՛նչ աններ-
դաշնակ գոյներու ընտրութիւն և ի՛նչ
անկերպարան զգեցում։ Դեռ չարաթ
մը առաջ տեսանք մանկամարդ օրիորդ
մը որ «յղի կնոջ» յատուկ ծանրագին
կերպասէ սուկան մը հագած էր, որու
օրինակը երեք չարաթ առաջ տեսած
էինք նորաձևութեան պատկերազարդ
հանդէսի մը մէջ։ Անշուշտ, ո՛չ հագ-
նողը օրինակին ստորե գրուած ծանօ-
թութիւնը հասկցած էր, և ո՛չ ալ զայն
ձեռողն ու կարողը։ Եւ երբ Հանրագի-
տակի Վայելչազարդութեան բաժնին կը
ձեռնարկենք՝ այդ անհասկացողութեան
առաջին առնելու համար է։ Մեր շատ
մը դերձակներն ու դերձակահիները չեն
հասկնար նորաձևութեան ֆրանսերէն
թերթերը, ո՛ւր մնաց մեր ընտանիքները,

որոնցմէջ շատերը կա՛մֆրանսերէնի բոլո-
րովին անգիտեցեալ են կամ թերի կերպով
ծանօթ են։ հետեաբար այն ձեռնարկը
անվիճելի կերպով խիստ օգտակար պի-
տի հանդիսանայ մեր ընտանիքներուն
մանաւանդ։

Նորաձևութեան առթիւ ուրիշ սխալ
ըմբռնում մըն ալ տարածուած է մեր
մէջ. շատեր կը կարծեն թէ այս ամսու
գնուած գլխարկ մը կամ չըղազգեստ մը
ամօթ է դալ ամիս կրել։ Ի՛նչ տարօրի-
նակ ըմբռնում. ուրեմն մարդ պարտաւոր
է միշտ ամէն շաբաթ գլխարկ կամ չըր-
ջազգեստ փոխել, որովհետեւ այս շաբ-
թուան նորաձևութեան թերթը ուրիշ
ձև մը դրած է։

Հապա՛ այն օտարազգի գերձակու-
հիները, որոնց ափին մէջ հարկւրաւոր
ոսկիներ կը թափենք մեր կիներու շըր-
ջազգեստներուն համար. որովհետեւ
տանտիկինը կամ օրիորդը ձեւագիտու-
թենէ չի հասկնար, նորաձևութեան թեր-
թերուն իմաստը լաւ չըմբռնել, որով
կ'ոտիպուի մեծ ծախքերու դուռեր բա-
նալ։ Աւելի խնայողական ու վայելուչ
չը՛լար զգեստը, երբ մեր կիները իրենց
ձեռքով ձեւել ու կարել սորվին՝ փո-
խանակ թէ՛ աւելորդ դրամ վասնելու և
թէ՛ դերձակահիին քմահաճոյքին համե-
մատ՝ աւելի կամ նուազ անվայելուչ շըր-
ջազգեստ մը կրելու։

Ուրեմն փսիանակ նորաձևութեան
դէմ պարսաւներ տեղացնելու, երեմիս-
կան ողբեր կարդալու, ջանա՛նք պատ-
շաճապէս հագուելու կերպերը սորվիլ,
որպէս զի դադրինք օտարին ծաղր ըլ-
լալէ։ Ու այդ արդիւնքը կարելի է ձեւք
բերել Վայելչազարդութեան հայերէն
թերթեր ունենալով, փոխանակ առանց
մեծ բան մը հասկնալու ֆրանսերէն
թերթերէն ընտրութիւն մ'ընելով։

Փութանք աւելցնելու որ Վայելչա-
զարդութենէն զատ, Հանրագիտակի կա-
նանց Բաժինը պիտի զբաղի նաև կա-

նացի ամէն տեսակ ձեռարուեստներով, ձեռագիրութեան գործնական դասերով. որոնք մեր աղքատիկ դասու վերաբերող կիներուն համար ապահով ապշուստ մը ճարելու մեծապէս պիտի նըպաստեն:

Այս ամէն ակներե ու անժխտելի օգտակարութիւններէն յետոյ, զոր Հանրագիտակ ջերմագին փութկոտութեամբ կուգայ մատուցանել մեր ընտանիքներուն, հանրութեան կը մնայ իր քաջալերը չի զլանալ և ընդ փոյթ՝ այս առթիւ բացուած բաժանարդագրութիւնը լրացնել:

Մ. ԳԱԼԵՆՏԵՐ

ԲԺՇԿԱԿԱՆ ՆՕԹԵՐ

ԴԱԼԿԱԽՏ [ՍՄԱՐԸԸԳ]

Վաղուց ճանչցուած կարգ մը հիւանդութիւններ կան, որոց մասին արդարեւ այն գուհիկ համոզումը քանդակուած է հասարակութեան մտքին մէջ, չգիտցուի որպիսի ուսմական նախապաշարումով անշուշտ, թէ բժշկութիւնը չէ հիւրընկալած իր էջերուն մէջ այդ հիւանդութիւնները, «կէլիֆիկ»ի, «խորայի», «խուլունճ»ի և «տըրսէվէ»ի նման ու ատոնց հակընդդէմ չունի նաեւ իր բուժիչ դարմանն ու բալասանը:

Ահա այս կարգի հիւանդութիւններէն են օձացաւը (երլանճը), ջղային խել մը խանգարումներ, ու նաեւ մեր ներկայ նօթերուն նիւթն ու հիւթը կազմող դալկախտը, որոց ենթակայ ըլլալու տարաբաղդութիւնն երբ ունենաք, ամենամեծ ցաւ է ըսել որ առանց գոնէ հեղ մը բժշկին խորհուրդ հարցնելու, ու ազդու դարմաններուն կամովին անձնատուր ըլլալու, ուղղակի, հապճեպով վազն ի վազ խել մը խաբեբայ դարմանողներու կը դիմէք, որոնց՝ ուսմական բարբա-

ռով, եթէ դալկախտ դարմանող է՝ «սարըլըխ» կոչող անունը կուտաք, միւս հիւանդութեանց նայողներուն ալ վհուկ, հմայող, աղօթող կըն:

Սօսքս մասնաւորելով, կ'ըսեմ թէ դալկախտի այս տեսակ իբր թէ փորձառու մասնագէտներ շատ ու շատ կը վստահատան, և եթէ դալկախտաւոր մը ձեռք ձգեն դարմանելու համար, շատ տարօրինակ և զաղրելի դարմանում մը ի գործ կը դնեն, որ շատ ժամանակ հեռի չէ մեծ վտանգներ և բազում վնասներ առթելէ, այսինքն նախ հիւանդին ճակատը թուքով օծելէ վերջ, յօնքերուն մէջտեղը ուղղաձիգ կերպով կը կրտրեն հատու գործիքով մը, որ հաւանական է թէ ածելի ըլլայ, առանց հակաանխելու դժբաղդարար:

Ազնիւ ընթերցողներ, թերեւ ձեր աչքին այնքան ծանր և վնասաբեր չեւի իբր դարման ծառայող այս կեղծ և նենգ ձեռակերպութիւնները, սակայն քանի՞ կեանքեր արդեօք խորտակուած, քանի՞ հոգիներ փճացած և եղած են հիմնայատակ ստոնց երեսէն: Հազիւ թէ երկու երեք տարի առաջ, կը հաւատա՞ք եթէ ըսեմ—ինչ որ իրականութիւն է—որ այս կարգի կարծեցեալ մասնագէտի մը դանակով Սամաթիացի նուագածու մը ֆրանսական ախտով պատուաստուած է ի մեծ դժբաղդութիւն իրեն, որ երեւակայեցէք, հաւանօրէն արդեօք որքա՞ն դառնութեան մատնուած է այդ անողոք ախտին վիճակակից լինելուն համար, ու նաեւ որքա՞ն իր անմոռութեան հետեւանքով ունեցած կեանքի կորուստն դառնագին ողբացած է աւազելով, հառաչելով աներկբայապէս: Սակայն վերջին զղջումը անօգուտ է:

Անմոռութեան պատճառով կեանք վրայ տալ, զոհել, չիտակը ըսելով ճիշդ ելեկտրական հոսանքաւոր մը ուժով կը ցնցուի դոգցես մարդ զայս երեւակայած պահուն:

Ահա՛, ազնիւ ընթերցողք, այս տարաբաղդ և հէք նուագածուին նման շատ անգամ ձեր անգիտութեան ու անխոհմտութեան արդիւնքով և անտեղի ու արտեղի նախապաշարման երեսէն յանձնափա կը տուծէք նիւթապէս և բարոյապէս, և սակայն վերստին ցաւալի է ըսել որ շատեր բնաւ չեն խրատուիր տեսնուած զոհերէն ու օրինակ-

ներէն: Միով բանիւ կ'ուզեմ հասկցնել ձեզ թէ մասնագէտի փորձառութիւն կեղծող այդ երանեալ ուղէտ բուժիչները ձեր դպրկախորդ կը կորեն՝ զձեզ ի հուր արկանելու համար:

Ուրեմն կը յորդորեմ զձեզ անարժանաբար և ջերմապէս կը յանձնարարեմ, ազնիւ ընթերցողներ, որ եթէ երբեք դպրկախորդ բռնուելու դժբաղդութիւնն կրէք, առանց վարանելու՝ ուղղակի բժիշկին, միշտ բժիշկին դիմէք, երբեք անբիւրեքներու, և կամ դոնէ հոս ցոյց տալիք դիւրահասկնալի դասալու մ'ըմբռնելով ի կիր առնուք:

Մանրամասնութեանց մտնելէ առաջ հարկ է նախ ըսել թէ դպրկախորդ լեարդային հիւանդութիւն մ'է: Լեարդը գիտեղութեամբ է որոպային վերին մասին մէջ, և կը գտնուի աջ սնակուշտին մէջ, ստոծանիին տակ, և ստամոքսին վրայօք: Ինքնին ամբողջովին կը լեցնէ աջ սնակուշտը, մակարովայնը և մասամբ ձախ սնակուշտը: Ըսել է բաւական տեղ կը գրաւէ որովայնին մէջ:

Լեարդի բնախօսական յատկութիւնն է մաղձ արտադրել (նաեւ չաքար) որ մասնաւոր մաղձանքներու միջոցաւ նախընդերի մէջ կը թափուի, ընդերային մարտողութեան կը նըպաստէ և կղկղանքը կը գունաւորէ: Եթէ որ և իցէ պատճառով մը լեարդի կողմանէ արտադրութեամբ մաղձը աղիքին մէջ չթափուի, և արեան հետ միախառնուի, այդ ատեն ահա՝ դպրկախորդ կը ծնի. որ ըսել է արեան մէջ է մաղձի գոյութիւնը:

Մաղձը երբ արեան հետ միանայ, անոր հետ ամբողջ մարմինը կը շրջի. այս եղանակաւ բոլոր հիւսկէները, գործարանները, պատեանները առաւել կամ նուազ կը գունաւորէ: Ասկից կարելի է հետեցնել թէ դալկախորդ մաղձային երկնանիութիւն մորթի եւ մզանուաններու դեղնագունիւր կը նշանակէ:

Ըսինք թէ երբ մաղձը արեան մէջ թափանցէ՝ դպրկախորդ երեւան կուգայ: Արդ խնդիր է գիտնալ թէ ինչպէս մաղձը արեան հետ կը խառնուի: Մաղձը գոյանալէն վերջէն, երբ իր բնական անցքին վրայ իր ճամբան կտրող ու է արգելքի մը հանդիպի, անմիջապէս կը շեղի իր ճամբէն, և փոխանակ աղիքին մէջ կարենալ թափուելու, կ'ուղղուի դէպի մակալեարդային երակը և անոր մէջ թափ անցելով, այս միջոցաւ կը խառնուի ընդ-

հանուր արենային շրջանառութեան: Եթէ փորձով կ'ուզէք համոզուիլ, ու և իցէ կենդանայ մը մաղձառտար անցքը կապեցէք, ու այս կերպով արգելեցէք մաղձին բնական ճամբէն վազքը. մէկ քառի ժամուան մէջ պիտի նշմարէք թէ՝ ձեր փորձի ենթարկած կենդանին դպրկախորդ ենթակայ եղած է:

Հիմա թերեւ հարցուի թէ ինչ պատճառներով մաղձանցքը կը գոցուի: Այս առթիւ շատ մը պատճառներ կրնան ցուցուիլ. օրինակի համար մաղձային քարերով, մաղձային ճամբաները ծածկող մզանուան բորբոքումով, լեարդի վարկեղով, լեարդի ուռացքով, լեարդի արենախառնումով ևն: Ուստի կրնանք եզրակացնել թէ այս յաջորդաբար համարած հիւանդութեանց ընթացքին մէջ դպրկախորդ երեւան կրնայ գալ: Վերոնշանակեալ հիւանդութիւններէ զատ կան նաեւ կարգ մը հիւանդութիւններ, որոնց ընթացքին մէջ ալ դպրկախորդ գոյութիւնը կը նշմարուի, զոր օրինակ դալկատեղի, ճահճային տենդի, թոքատապի, կողատապի, օճացաւի ընթացքին մէջ: Ասոնցմէ զատ նաեւ լուսածինով, ալբուով, էթերով, բրորուկով, բոժոժաւոր օձի թոյնով, պատահած թունաւորումներու ատեն դպրկախորդ կրնայ յառաջ գալ: Չմոռնանք նաեւ ըսել թէ բարոյական յուզումներն ալ (վախ, բարկութիւնք ևն) կրնան դպրկախորդ տեղի տալ: Վերջեւ երկու անձերու մէջ տեղի ունեցած վէճի մը ականատես լինելով կ'ըսէ թէ բուռն բանալուի մէջ մը վերջ երբ մին իր հակառակորդին դէմ սուրով կ'սպառնայ, հակառակորդն իր զգացած երկիւղէն վայրկենապէս կը գունաթափի ու դպրկախորդ ենթակայ կ'ըլլայ. իսկ սպառնացողն իր հակառակորդին դիմական անակնկալ դալկացումէն ապշած կը թողու ձեռքէն գէնքը ի մեծ բարեբաղդութիւն հակառակորդին: Ահա՛ ակներեւ է թէ երբեմն թեթեւ չարիքներ աւելի ծանրագին չարիքներէ կը ժրկեն մարդոյ, և կամ կրնանք հաւատալ Վերջեւովի պատմութեան վրայ ձեւելով թէ չարիքէ բարիք կը ծնի երբեմն:

Դալկախտաւոր մը յամբկներու փունջի մը սլէս տփուոյն ու տոյն կերպարանք մը կ'առնէ, որ առաջին ակնարկով գոգցես թոքախտաւորի մը տխուր ներգործութիւնը կը թողու ականատեսին վրայ:

Դալիախոր նախ իր գոյութիւնը կը ցուցնէ՝ գէմքին՝ մասնաւորապէս ակնագողին վրայ, յետոյ կը տարածուի քունքերուն, առնգերուն, բերնի մզանուտին և անդամներուն վրայ: Դալիախորի գոյնը ամէն վարակեալի վրայ միեւնոյն կերպով շնչմարտէր, երբեմն կը տարբերի, ոսկեգոյն, քրքմագոյն (չափրան բէնկի), կանաչորակ, ձիթագոյն, ու նաեւ սեւորակ դեղինի կը փոխուի:

Արեան խառնուած մաղձային երփնանիւթը տարբեր միջոցներով մարմնէն դուրս կը վտարուի, մեծ մասամբ երկամներու միջոցաւ, այս պատճառաւ մէզի գոյնը կը փոխուի, բոլորովին կարմիր դեղին գոյն մը կ'առնու, որ հիւանդութեան յայտարար ախտանշաններէն մին է. մէզին դեղին գոյնը մաղձային երփնանիւթին քանակութեանը համեմատ կը տարբերի, որքան շատ ըլլայ այնքան մէզին դեղնութիւնը աւելի կ'ըլլայ: Նաեւ քրտնաբեր և ճրագուղային (sécréacé)ութիւններու միջոցաւ ալ մարմնէն դուրս կ'ելլէ, որուն պատճառաւ քրտինքի հետ չփման մէջ գտնուող ճերմակեղէնները կը դեղնագունին: Կաթն ալ իր մէջ կրնայ պարունակել մաղձային երփնանիւթէն, որով դիւրին է հետեցնել թէ նորածին մը դալիախտաւոր կաթնոտի մը յանձնել անթոյլատրելի պարագաներէն մին է: Սա ալ կ'արժէ գիտնալ թէ դալիախորի մասնաւոր յղի կնոջ արդանդին մէջ դեղին գոյնը կրնայ փոխանցիլ սաղմին:

Դալիախտաւորներու կղկղանքը սոսկ պանգոյն և կարծր կ'ըլլայ մաղձարդեղութեան պատճառաւ (մաղձանքին խցման հետեանքով), և մաղտաքէի (mastite) ու կաւի գոյնը կ'առնէ, գարշահոտ կը դառնայ: Սովորաբար ախորժակը կը նուաղի, մարսողութիւնը թերի կը կատարուի, լեզուին մակերևոյթը խրամորանման խաւով մը կը ծածկուի, ու բերնին մէջ ալ լեղի համ մը կ'զգացուի: Ահա ասոնք ալ հիւանդութեան գլխաւոր ախտանշաններն են:

Դալիախտաւորներու բազկերակի բաղխումները սովորաբար կը դանդաղին, և մէկ վայրկեանի մէջ մինչև 40—30ի կրնան իջնել, բազկերակի բախմանց դանդաղութիւնը արեան մէջ թափանցող մաղձային աղերէ առաջ կուգայ: Արեան մէջ նշանակելի փոփոխութիւն մը չնշմարտիր, միայն թէ սուր դալ-

իախտի մէջ արեան շիճային մասը մաղձի գունատու տարրով կը ներկուի, իսկ շարունակ (chronique) տեսակին մէջ արեան կարմիր գնդիկները կը նուաղին և քուլտէռին և իւղային մարմինները կ'աւելնան: Դալիախորը յաճախ ռեգային տրիւնահոսման տեղի կուտայ, և արիւնը մանաւանդ աջ ունդունքէն կը հոսի: Դալիախորը սոսկ տեղի կուտայ եռքի մը, որ մանաւանդ ձեռքի և ոտքի աւելի կը վիճակի, և որ երբեմն անհանդուրժելի կը դառնայ, ու հիւանդը դիչերն ի բուն քունէ կը զրկուի:

Ընդհանուր տեսակէտով, դալիախորի մը հետեանքը միշտ ուշադրութեան առարկայ ընելու է: Երբեք պէտք չէ մոռնալ որ դալիախորի ծանր տեսակը՝ որ միշտ մահացու է գրեթէ, երբեմն կ'սկսի պարզ դալիախորի մը թեթեւ նշաններով: Դալիախորը եթէ տաքութեան հետ ընկերացած ըլլայ, կամ թէ ուժասպառական ախտանշաններով երեան գայ, կատարելի կը նկատուի:

Գալով դալիախորի դարմանին, այս ալ գրեթէ հիւանդութեան ախտանշանները դարմանելու մէջ կը կայանայ: Եւ որովհետեւ հիւանդութեան ընթացքին մէջ մարսողական խանգարում երեան կուգայ, հարկ է որ մարսողութիւնը բարւոքող դեղեր գործածէք. առ այս պէտք է նախ առնէք աղային մաքրողական մը, և ի հարկին կրկնէք (անինէն լուր sulfate de soude, sulfate de magnésie, magnésie anglaise կը յանձնարարուին):

Մինչև վերջը հիւանդութեան՝ առատութէն կաթ խմէք, նաեւ վիշիի և վալսի հանքային ջուրեր, և եթէ կ'ուզէք՝ կաթը հանքաջրով միտաին խառնեցէք և ապա խմեցէք: Իսպառ հրաժարելով հրաժարեցէք ոգելից ըմպելիներէ և զանազան համեմունքներէ (պահպարթ):

Շատ կարեւոր է նաեւ մասնաւոր ուշադրութիւն դարձնել ընդերային հալանխման ու օրական երեք կուսով չափ, բայց պարբերաբար պէտք է առնէք քաշէի մէջ «Նաֆթոլ» պէթօլ և կամ «Պանգոնալթօլ» կոչուած դեղերէն մին:

Մարսելի յագեցնելու համար կը բաւէ միայն պարզ լիմոնատ գործածել:

Ախորժակի պակասութեան անհետացման համար ալ աշխարհածանօթ քինքինան, դառ-

Նահապետաբուհի և Խաչատրյան (առավել) իբրև օգտակար զեկեր կը յանձնարարուին :

Դաշկախաի բնութեան վրայ խօսած տետենիա պէտք է ըսենք թէ արեան խառնըւած մաղձին մեծագոյն մասը երիկամանց միջոցաւ մարմնէն կը բաժնուի։ Արդ դիւրին է գուշակել թէ միզատու դեղեր ալ գործածել հարկ անհրաժեշտ է։ Այս յատկութիւնն ունեցող դեղերու շարքին մէջ մառնաւորութար կը ներկայացուին acetate de potasse, tartrate de potasse և azotate de potasse որոց առաջին երկուքն օրական մինչև 2—10 կռամի, իսկ վերջինն միայն երկու կռամի չափ կրնաք գործածել։

Այս առթիւն կ'որոժէ նաև յիշել թէ Բոլիւ
մէկ քանի տարիէ ի վեր դալկախաւի դար-
մանման համար նոր միջոց մը կը յանձնարա-
լէ, որ ինքնին սլարզ և դիւրագործածելի
է, այսինքն իւրաքանչիւր օր 10—18 աստի-
ճան մէկ լիբրա սլաղ ջուրով գրեխել (հօգ-
նա ընել)։ Ահա այս է Բոլիւլի դարմանը,
որ մէկ քանի կիրառումէ վերջ ազիքին մէջ
մազմին գոյւթիւնը նշմարել կուտայ ձեզ,
ինչ որ հիւանդութեան անհետացումը ըսել
է։ Յաջորդիւ դալկախաւի ծանր տեսակին
վրայ։

УИСУБ

ՇԵՐԱՄԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ԲԱՍԴԵՕՒԵԱՆ ԴՐՈՒՅԻՒՆՈՎ

ՄԱԿԱՐՈՒԾԱՅԻՆ ՓՈԽԱՆՑԻԿ ՀԻՒԱՆՊՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ

Պղպեղախա (Pébrine, Գ. ար. ար. - թ. ար. ար.)

(Ḥayyūn-ḥayyūn-ḥayyūn. ḥayyūn ḥayyūn 37)

ՄԱՐՄԵՆԻԿՆԵՐՈՒ ԱԶԴԵՑՈՒԹԵԱՆ ՏԵ-
 իՈՂՈՒԹԻՒՆԸ .— Մեր այս բացատրութիւն-
 ներէն կ'եզրակացնենք որ, մահաբուժային
 երկու որոշ արտադրութիւններ կան : Մին՝
 հաւկթակերպ իւայլուն մարմնիկները , միւսը՝
 տոգոյն՝ տանձակերպ կամ կլորցած բճիճի
 ձեւ , և կամ հաւկթակերպ մարմնիկները :
 Այս վերջինները՝ առաջիններուն սերնդաւո-
 րից գոյացութիւններն են : Փայլուն մարմնիկ-

ներուհն մէջ, նիւթը ուժղնապէս ընդամաճ
և սովորես է, ոչ թթուները, և ոչ ալ ալ-
քալինները (սթաւ, ոստ) չեն կարող այլա-
փոխել, եթէ արտածայր խտացման մէջ չի
դադնուին ատոնք, այսինքն՝ չսփառանց ու-
ժով:

Միւսներուն կազմը՝ ընդհանառակը շատ փափուկ է, աւելի մոտեցող, և շատ չուս կ'աւրուին. և ինչպէս զխոնքը, ասոնք դեռւատի են և սերնդազորածութեան մէջ, հետեւաբար եւ բոլոր մարմնիկներու արտադրութեան նախատարբը կը կազմեն: Նոյնպէս փայլուն հաւկթակեցող մարմնիկները ոչ միայն չափահաս չըլանի մը մէջ կը գտնուին, այլ և տարեց՝ սերնդաւորելու անկարող, և անլիցայ: Բաց օգի ներկայութեան թողլով, կը չորնան առանց երեւոյթնի մոխսելու: Եւ աւելի կարեւորը՝ այլ ևս «վարակելու անկարող» վիճակի մը մէջ կը գտնուին, բնականաբար սերնդաւորելու կարողութենէն զերկուսած ըլլալուն համար: Դեռւատի մարմնիկներն ալ չորնալէն վերջը նոյնպէս անկարող կ'ըլլան սերնդաւորելու, որովհետեւ իրենց նշարակազմ յօրինուածքը կ'աւրուի. բայց ըստ ինքեան, որչափ թարմ և «կենդանի» մնան, իրենց սերնդաւորութեան կարողութիւնը կը պահեն:

Ինչպէս ըսինք՝ ասոնք հիւսկէներու աւերումէն յառաջ եկած արտադրութիւններն են . իրենց գեռատի չըմանին մէջ սերմնակերպիկներու հանգոյն մակաբոյծներ են , և իրենց փայլուն և տարէջ վիճակին մէջ , արեան և թարախի գնահիկներու նմանող «յօրէնիտներ» (organite) են , որոնք վերջնորոշ յօրինուածաւորութիւն մ'ունին , առանց սերնդագործելու կարողութեան :

Իրենց ղեռառով շրջանին մէջ ունեցած
դիւրաքայքայ յօրինուածակազմութեան պատ-
ճառաւ, և իրենց տարէց վիճակի անկարո-
ղութեան պատճառաւ, պղպեղախտի մարմ-
նիկները իրենց վարակիչ կարողութիւնը խիստ
կարճատեւ ժամանակ մը կլնան պահել, ինչ
որ բարեբաղդութիւն մ'է: Եւ ասիկա հաս-
տատելու համար շատ մը փորձեր կատար-
ուած են, որոց մէջ, անկարելի եղած է պղ-
պեղախտը փոխանցել առողջ թրթուրներու,
անոնց տրուած ուտեստի տերեւներուն վրայ,
չորս տարի առաջ պղպեղախտէ վարակուած

չերամատան մը չոր՝ բայց մարմնիկներով լեցուն փողի ցանեղէն վերջը: Նոյնպէս անկարելի եղած է վարակել, նախորդ տարուան մը՝ ախտաւոր թրթուրներու սենեակի փողին ցանելով՝ ինչպէս և ախտավարակ թրթուրներու կղկղանքէն յառաջ եկած մարմնիկաւոր փողին թիթեռնիկներու միջոցաւ հունտերու վրայ տարածուելէն: Վերջապէս կարելի եղած չէ նաև առողջ թրթուրները վարակել իրենց ծննդեան մէջ, վեց չարաթ առաջ միայն՝ չորցուած մարմնիկաւոր փողիներով:

Վերջապէս պղպեղախտի մարմնիկները երբէք մէկ տարիէն միւս տարին չեն կրնար իրենց սերնդագործելու կարողութիւնը պահել, և հետեւաբար անկարելի է որ նախորդ տարուան պղպեղախտի մանրէն, այս տարուան շերամները վարակէ. միայն՝ «անոնք որ շերամի հունտերու մէջ կը գտնուին, իրենց սերնդագործութեան կարողութիւնը» անվերթար կը պահեն:

Ո՛չ փողիները և ո՛չ ալ կղկղանքները անկարող են վերոյիշեալ պարագաներու մէջ հիւանդութիւնը փոխանցել մէկ տարիէն միւս տարին: Ասիկա հաստատուած, ասպացուցուան ճշմարտութիւն մ'է այլևս:

Թէ ինչո՞ւ համար կը յանձնարարուի ուրեմն՝ խնամով մաքրել շերամատունը, աւելի, սրբել, հականեխել, քանի որ այդ մանրէներու ազդեցութիւնը երկարատեւ չէ:

Ուրիշ փոխանցիկ հիւանդութիւն մը՝ որու վրայ անցողակի խօսեցանք, և առիթ սխտի ունենանք ի մօտոյ ընդարձակօրէն պարզելու, փտախաւ (flacherie), այս սոսկալի հիւանդութիւնն է, որ կ'արտաստելի փողիներէ, կղկղանքներէ, բեկորներէ և ըն. որոնք՝ իրենց մէջ կը պարունակեն անոր մանրէները, զորս պէտք է ոչնչացնել հետեւաբար:

Արդ՝ վերադառնալով կրկին պղպեղախտի, որոշապէս կրնանք ըսել թէ, ոչ ախտաբեր միջավայր կայ, և ոչ ալ համաճարակային: Հիւանդութիւնը ամէն տարի կը վերածնի. որովհետեւ «ժառանգական» յատկութիւն մ'ունի, որով եթէ լրջօրէն գերընտրութեամբ հետաքուծութիւն կատարուի, շատ բնական է որ՝ տակաւ հիւանդութիւնն ալ անհետանայ:

Ղ. ԲՈՒԱՏ

ՄԱՆԻՍԱՅՈՑ ՄԱՆՈՒՍԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Արդէն օգտաշատ Հանրագիտակիդ քանի մը թիւերուն մէջ Արարկիրէն ու Մանիսայէն ներհուն յօդուածներ երեցան մանուսագործութեան վրայ: Իբր Մանիսացի և ոստայնանկի որդի, շատ մօտէն ուսումնասիրած ըլլալով խնդիրը, կ'արժէր մեր համեստ գաղափարները պարզել այն նիւթին վրայ՝ ցուցնելով Մանիսացի ոստայնանկներուն ինկած վիճակին պատճառներն ու դարմանները. սակայն ատիկա յառաջիկային թողլով, կը փութամ կատարել կանխաւ տուած խոստումս՝ թէ և քիչ մը անագան, գրելով այն գոյններուն վրայ գործնք կը ներկէ Մանիսացի արհեստաւորը:

Ամէն տեղի արհեստաւոր դասակարգին պէս՝ ոստայնանկն ալ կը զլանայ իր արհեստին գաղտնիքը աշխարհաւոր հրապարակել. ամիկա ընկերական իրաւունք մ'է զոր կը սեպհականէ իրեն կարի իրաւամբ: Իր այս իրաւունքին վրայ աւելի կը պնդէ Մանիսացի ջուլհակը երբ կը պարծի թէ ներկարարութեան մէջ իրեն մրցակից չեն կրնար հանդիսանալ Փոքր-Ասիոյ մանուսագործական կեդրոնները: Արդարեւ իր ներկած գոյները ողորկութեան, վառվառն փայլունութեան մասին չեն կրնար մրցիլ եւրոպական գոյներու հետ, սակայն անայլալուծեան կողմէ վար չեն մնար անոնցմէ: Եթէ կիրարկուած նիւթերուն քանակն ու որակը ճիշդ ու ազնիւ ըլլայ և խարդախ միջոցներու չդիմուի: Արդէն ամէն տեղ, մանիսացիին մանուսաները գնահատուած են իրենց այդ յատկութեան՝ անայլալուծեան (խաս) համար:

Թափորդարար սխտի բացատրենք Մանիսացիներու ներկարարութեան մէթոտները, սկսելով կարմիրէն, որուն ներկումը բազմախճով և տալովացուցիչ գործողութիւններէ կը բաղկանայ:

ԿԱՐՄԻՐ

Մանիսայի մէջ կարմիր ներկի գիւտը հազիւ քառորդ դարու հնութիւն ունի. սկիզբները կամ ասկէ 10—12 տարի առաջ տեղական միջոցներով կը ներկէին, եւրոպական անմատչելի ընելով շատերուն՝ իր տարապայ-

ման սղութեան պատճառաւ . սակայն պիտի այս վերջնայն գնդին դիւրամատչելիութիւնը ստիպած է արհեստաւորը լքանել իր տեղական միջոցներով ներկած կարմիրը որ, յոգնեցուցիչ գործողութիւններէ կը բաղկանայ :

Ահա՛ տեղական կարմիր ներկելու միջոցները :

Չորս օխա մանած 12—15 օխա ջուրի մէջ խաշել մէկ ժամ ու չորցնել : Յետոյ 100 տրամ նատրոնի բնած խաւ (carbonate de soude, սօտա) 10 օխա ջուրին մէջ հալեցնել ու թրջուլ 12 ժամ, և այդ լուծաջուրին կէսին մէջ կէս օխա ձիթաւիւղ խառնել, ուրիշ կ'ստանանք կաթանման հեղուկ մը, որուն մէջ մանածը ութ մասի բաժնելով՝ բուռնցնելու հարուածով թաթխել, քամել ու չորցնել : Վերջը լուծաջուրին մնացեալ կէսին մէջ կըրկին կէս օխա ձէթ խառնել ու նոյն գործողութիւնները կրկնելով՝ չորցնել մանածը : Ետքը 1 օխա սօտա 10 օխա ջուրի մէջ հալեցնել և երկու մասի բաժնելով մանածը երկու անգամ լէջը թաթխել ու չորցնել : Չորնալէ վերջ ալէկ մը պաղ ջրով լուալ ու չորցնել : Այս գործողութիւններէն ետք՝ խալկինի մէջ 25—30 օխա ջուր լեցնել ու տաքցնել . անոր տաքցած միջոցին մէջը 75 տրամ ալիզարին լեցնել, և մանածին կապերը յաջորդաբար ափին մէջ առած դարձնել բաւական առէն այդ տաքցող ջուրին մէջ և յետոյ մէջը քամել ու դուրսը շարել : Երբ ամբողջ մանածը այս գործողութիւնէն անցնի, վերստին 75 տրամ ալիզարին լեցնել մէջը ու նոյն գործողութիւնները կրկնել . սակայն այս անգամ մանածին կապերը՝ առանց դուրս հանելու՝ խալկինին մէջ իրարու վրայ կը շարեն, և գործողութիւնը լրանալէ վերջ՝ խալկինին տակի վառուած կրակը կ'սկսին բոցարծարծ վառել 2—2 ու կէս ժամ, որմէ վերջ մանածը դուրս կը հանեն և կը կախեն որ քամուին իրենք իրենց և ասպա սրաղ ջուրով կը ցողունեն կամ կը լուան :

Այս պայմաններով մանածը ստացած կ'ըլայ անայլայլ կարմիր գոյն մը :

Ս Ե Ի

Մէկ բաքէթ մանածը (3 ու կէս օխա) խաշել 15—20 օխա ջուրի մէջ ու ասպա քամել

լաւ մը, 120 տրամ կալիի երկբրոմատ (պիքըրոմատ) տը բօթաս, կարմիր բօթաս) 5 օխա տաք ջուրի մէջ հալեցնել և յետոյ 75 տրամ «անիլին»՝ 125 տրամ քլորաջրային թթու (ասիտ քլորիտրիք ու միւրիաթիք, թուզ րուհու) իրար խառնել 8 օխա ջուրի մէջ : Յետոյ այս երկու բաղադրութիւնները իրար խառնելով՝ մանածը թաթխել անոր մէջ, և մնացեալ ջուրին մէջ պառկեցնել մանածը 4 ժամ, որմէ վերջ կ'ստանայ անայլայլ սև գոյն մը :

Դ Ե Ղ Ի Ն

Մէկ բաքէթ մանածը խաշել 15—20 օխա ջուրի մէջ ու քամել . յետոյ 150 տրամ կապարի ենթաքացախաւ (սու-ասեդադ տը բլումպ, գուրչուն տուզու կամ պէյապ) և 75 տրամ քարմարցանկ (իդարթ ու օքսիտ տը բլումպ, միւրտէսէնկ) 10 օխա ջուրի մէջ եփել եռացմամբ . այդ ջուրով մանածը թաթխել տաք տաք (ձեռք դիմանալու չափ), վերջը 100 տրամ կարմիր բօթաս 10 օխա տաք ջուրին մէջ հալեցնել ու թաթխել մանածը վերստին՝ ու քամելով չորցնել :

ՆԱՐՆՋԱԳՈՅՆ

Դեղին մանածը նարնջագոյն (թուրուճի) ներկելու համար մէկ օխա կիւր, 12 օխա ջուրի մէջ կը հալեցնեն (1 բաքէթի համար), և յատուկ կրաջուրէ կը քաշեն գայն (մանածը) :

ԿԱՆԱՆՉ

Մասնաւոր ներկարարներ կան որոնք լեղակ (չիվիտ, սիւտ մափի) կը ներկեն . բայց իրենց արուեստին զաղտնիքը ոչ մէկու կը յայտնեն : Անոնց ներկած լեղակին վրայ եթէ դեղին ներկին գործողութիւնները կատարուին՝ կանանչ ներկուած կ'ունենանք :

ՍՐՃԱԳՈՅՆ

Մէկ բաքէթ մանած 15—20 օխա ջուրի մէջ խաշել, կէս օխա տեօտակ մը ձիւթ (տեղացիք «գահվէրէնկի» զիթի կ'ըսեն) մանրել և հալեցնել կրակի վրայ 12 օխա ջուրի մէջ . և այս լուծաջուրին մէջ մանածը թաթխելով թողուլ 12 ժամ . յետոյ հանել և քա-

մեկ Ապա 75 տրամ կարմիր բոթաս 4 օխա ջուրի մէջ հալեցնելով մանածը վերստին թաթխել և թաթխուքին մէջ թողուլ 5—6 ժամ. յետոյ հանել՝ քամել ու չորցնել:

Ասոնք են ահա (լեղակն ալ մէկտեղ) այն գոյներն՝ որոնք գլխաւորաբար կը ներկէ Մանիսացի ոստայնանկը և կը գործածէ՝ իր արհեստին համար: Եւրոպական կարմիրը եւ ճերմակը միայն կ'սպառին աւելի, իսկ միւս գոյները ինք իր ձեռքովը կը ներկէ, յաճախ խարդախ միջոցներու դիմելով մանաւանդ սա վերջի տարիներուն մէջ:

Իբր վերջաբան ըսենք թէ սե ներկի ըսկզբնաւորութիւնը հապիւ 4—5 տարիի կը հասնի. անկէջ առաջ անոր փոխան լեղակ կը գործածէին և դուն ուրեք եւրոպական սե: 1894ին էր կարծեմ, փաստաբան Կարապետ էֆ. Զարիֆի սե ներկելու միջոցը սովորած ու սովորեցուցած է Մանիսացիներուն: Իր ներկած սեը կրնար միջիլ եւրոպական սեին հետ. սակայն ընդհանրապէս պէս ինչ ինչ չահախնդիր արհեստաւորներ սկսան նիւթերուն քանակը նուազեցնել և արտադրել այնպիսի սե մը զոր մարդ կ'ամչնայ սե անուանել:—Լեղակի ներկարարները թուրք և յոյն են. վերջերս հայ մ'ալ սովորեցաւ:

Ագհիօար Գ. ՇԱՀԻՆԵԱՆ

Յ. Գ.—Իբր առաջին առաջարկող մը որ բարեհաճիք Հանրագիտակի մէջ ներկարարութեան Դասընթացք մը հաստատել, ակընդէմ կ'սպասեմ անոր իրագործման:

ՆՈՅՆ

ԳԵՏՆԱԽՆՁՈՐՆԵՐԸ ԵՐԿԱՐ ԱՏԵՆ ՊԱՀԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Մշակութեան հետ, գետնախնձորները երկար ատեն պահելու միջոցին վրայ ևս հարցուած էր մեզ, իզմիտէն Մ. Ն. Միքայէլեան էֆ. ի կողմէ, որ ահաւասիկ:

Գարնան մօտերը երբ օդը կ'սկսի տաքնալ գետնախնձորը իր վրայ գտնուած աչքերէն բողբոջներ կ'արձակէ, որոնք յառաջ կուգան, իր բաղադրութեան մէջ գտնուած

ամենէն կարեւոր տարրը գոյափոխելով, որով գետնախնձորը իր սննդարար յատկութիւնը կորսնցնելով, անգործածելի կը դառնայ, և երբեմն իսկ զնստակար, երբ այդ բողբոջները խառնուին մատակարարուած սննդեան հետ, իրենց բաղադրութեան մէջ գտնուած թուճաւոր գոյեղով, որ բնամորմ (սօլանին) կը կոչուի:

Ասոր առաջըր առնելու համար շատ միջոցներ առաջարկուած են, մեծ մասամբ անգործադրելի, դժուարին կամ սուղ: Ինչպէս. օդի կամ թթուածինի ազդեցութենէն զրկել կամ չոր օդի մէջ պահել. և կամ կիրի, մոխիրի, չոր աւազի մէջ թաղել, և կամ ուէ ուրիշ նիւթերու մէջ, որոնք աաքութիւնը դժուար կը հաղորդեն:

1.—Արդարեւ, երբ գետնախնձորը օդի կամ թթուածինի ազդեցութենէն զրկուի, չի բողբոջիր, բայց քիչ ժամանակէն կը նիւթի: Մ. Սքրիպօ կ'ըսէ թէ, 2-տարի առաջ, Փրանսայի Արտաքին գործոց նախարարութեան միջոցով, Շիլիէն ընտիր տեսակէ գետնախնձորներ լերեւէտուի, զորս բաւաճիֆին խաւով մը ծեփած էր թէ և զրկողը, բայց ամէնքն ալ նիւթած և «թարխանա չորպասի» դարձած էին: Ասոր պատճառը, գետնախնձորը իր շնչառութեան հարկուոր արտաքին թթուածինէն զրկուելով, իր բաղադրութեան մէջ գտնուած թթուածինին դիմած է, որով շնչառութիւնը ներքնային ընթացք մը առնելով, նիւթին սյալափոխման տեղի տուած կ'ըլլայ, ուրիշ և ծնունդ կ'առնէ մարմնոյն բաղադրութեան և յետոյ նիւթումը:

Ուրեմն՝ երբեք մի՛ փորձէք, կ'ըսէ Մ. Սկրիպօ, պտուղ, բանջարեղէն կամ ուրիշ սեւ շնչակեաց նիւթեր պահել՝ թթուածինի ազդեցութենէն զրկելով զանոնք, վասն զի չի կրնալով առանց թթուածինի ապրիլ, պիտի ստիպուին իրենց նիւթի բաղադրութեան մէջ գտնուող թթուածինին դիմել, որու հետեանքը պիտի ըլլայ նիւթումը:

2.—Գետնախնձորը չոր մթնոլորտի մը մէջ պահելէն ալ օգուտ մը չի կայ. որովհետեւ ծրելու համար իր մէջ արդէն պէտք եղածէն աւելի ջուր կը պարունակէ: Խոնավութեան պակասութիւնը միմիայն օգտակար է այս պարագային մէջ, գետնախնձորը բորբոքելէ վերծ պահելու համար:

3.—Գետնախնձորը, կիրի, մոխիրի և լճի մէջ թաղելով, իր շուրջը կիսով չափ անխորտիս բարեխառնութիւն մը յառաջ կը բերուի, և բնախօսական երեւոյթներու գործունէութիւնը տկարանալով, բողբոջումը քիչ ժամանակուան համար կ'արգիլուի թէ և, բայց յորինուած աւոր նիւթերու կենսականութիւնը երկար ատեն չի մնալիք, կ'ըմբոստանայ եւ բողբոջումը յառաջ կուգայ: Այս միջոցը աւելի յարմար է տնկելու սահմանաւանդները պահելու, և արդէն մեծ քանակութեամբ գետնախնձորներու համար թէ դժուարութիւններ կան, և թէ սուղ կ'ըլլայ:

Եթէ ճարտարագիտութիւնը հնարած ըլլար իննայտղական սառուցիչ մեքենաներ, որոցմով խիստ աժանկէ կ'ազդուէր յառաջ բերուէր, այն ատեն, ըստ կամաց կարելի էր բողբոջումը յամրացնել, բայց միևնայն ատեն գետնախնձորի մէջ գտնուող օսլան տակաւ շաքարի գոյափոխուելով, բիւրեղացած պիտի մթերէր հոն, որ թէ և կենդանեաց ուտեստին համար կարելի կ'ըլլայ գործածել, սակայն մեր կերակրոց պատրաստութեան համար անյարմար և անխորժ պիտի ըլլար:

Բարիլի հունտերը փորձելու կայարանին մէջ կատարուած բազմազան փորձերէն հետեւած է որ, արտաքին միջավայրին վրայ չէ որ ներգործելու է, այլ ուղղակի գետնախնձորին իր վրայ, որ սահմանուած է պահուելու: Հաստատեցի որ, կ'ըսէ Մ. Սքոփօ, գետնախնձորներուն քիչ շատ ընձիւղած բողբոջները հիմնապէս ոչնչացնելով, երկար ատեն կը պահուին առանց իրենց յատկութիւնները կորսնցնելու:

Փոքր քանակութեամբ գետնախնձոր պահելու համար, բաւական է դանակի մը ծայրով, և կամ գրչակալին վրայ գրիչը հակառակ կողմէն անցնելով, աչքերը կամ ընձիւղները հանել 2—3 հազարամեթր խորութեամբ, այսպէսով կարելի կ'ըլլայ գետնախնձորը երկար ատեն պահել: Ինչպէս կ'ըսէ Մ. Սքոփօ, թէ կայարանի Լապոնաթուսին մէջ այդ եղանակով, աչքերը հանուած գետնախնձորներ ունի եղբւր 3 տարիէ ի վեր պահուած, որոնք թէ և թարթամած, և չոգիացմամբ իրենց ջուրը կորուսած, սակայն չոր նիւթերու քանակութիւնը չէ պակսած զգալապէս, միայն թէ աւելի քաղցրացած են:

Այս եղանակը ինչպէս ըսինք, յարմար է փոքր քանակութեամբ գետնախնձորները պահելու, որուն միակ անպատեհութիւնը՝ գործողութիւնը ծանր կատարուելով, սուղ ըլլալն է:

Մեծ քանակութեամբ գետնախնձորները դիւրութեամբ և աժանութեամբ պահելու համար Մ. Բրիլիէօ առաջարկած է եղանակ մը, զոր Մ. Սքոփօ իր կողմէն երկար փորձերով հաստատած ըլլալով անոր յաջողութիւնը, այսօր եւրոպայի մէջ շատ անգիւր կը գործադրեն այդ եղանակը:

Որովհետեւ դիւրին, աժան և ոտոյգ է որ ահաւասիկ 10—12 ժամու տեւողութեամբ, պէտք է գետնախնձորները ընկզմել, 100 լիթրա ջուրին 1—2 լիթրա ծծմբային թթու (զած եալը) պարունակող խառնուրդի մը մէջ. յետոյ չորցնելով մթերել չոր և օդաստուտեղ մը: Թթուախառն հեղուկը պէտք է պատրաստել փայտակերտ ընդունարանի մը մէջ՝ տակաւ, սնտուկ, և ինչ որովհետեւ երկաթէ, պղնձէ և քարէ ընդունարանները կը փտեցնէ և կը ծակէ: Եւ որպէս զի պատրաստութեան ժամանակ յանկարծական եռացում յառաջ չի գայ, նախ ջուրը լեցնելու է ընդունարանին մէջ, ապա թթուն. և փայտէ գաւազանով մը շարունակ խառնելու է: Երբ մեծ քանակութեամբ գնուի սովորական ծծմբային թթուն, որ Պոմէի թթուաչափով 66 աստծ. ըլլալու է, վեր ի վերոյ քիլօն 40—50 փայտի կ'առնուի: 1 լիթրա ծծմբային թթուն կը կշռէ 1 քիլօ 840 կրամ. հետեւաբար իւր լիթրայի 100 լիթրա քանակութեամբ խառնուրդին ծախքը պիտի ըլլայ.

Հր. ին 1 (1.840 ք. թթու) խառնուրդին հմբ. վեր ի վերոյ 2 ու կէս զրշ.

Հր. ին 1 ու կէս (2.760 ք. թթու) խառնուրդին համար, վեր ի վերոյ 3 ու կէս զրշ.

Հր. ին 2 (3.680 ք. թթու) խառնուրդին համար, վեր ի վերոյ 4 ու կէս զրշ.

Այս խառնուրդը երկար ատեն կարելի է գործածել, եթէ գետնախնձորները կրային հողով աղտոտած չըլլան, որ այս պարագային, հարկ կ'ըլլայ նախապէս լուծել մաքրել զանոնք: Երբ գետնախնձորը, այս թրթուախառն հեղուկին ազդեցութեան տակ կը մնայ, թթուն անոր աչքերու մակերևոյթէն 2 հազ. մեթրի չափ դէպ ի ներս թափանցե-

լով—ուր կեղեւը աւելի բարակ է քան այլուր—կը չորցնէ, և հոն աչքին տեղ կը գոյանայ ճշմարիտ սուսկի խցան մը:

Գործողութիւնը կատարելապէս յաջողելու համար ուշադրութեան առնելու է հետեւեալ կէտերը:

1.—Պէտք է գետնախնձորները առողջ և լաւ պահուող տեսակէ ըլլան, գիտնալով որ հոս մեր նպատակը ԹԹՈՒՆ ազդեցութեամբ միայն բաղադրանքները չորցնել է: Ուստի՝ եթէ գետնախնձորը կատարելապէս հասունցած չէ, և կամ արդէն ունէ հիւանդութեան մը ենթակայ է, հետեւաբար նետելու ընդունակ, այս եղանակաւ կարելի չըլլար առաջը առնել, և ոչ ալ ուրիշ ունէ եղանակով:

2.—Գետնախնձորները պէտք է առաջուց խնամով լուալ. որովհետեւ իրենց վրայ գրտնուած հալը քիչ կամ չատ խառնուրդը կը չեղոքացնէ:

3.—Տեղւոյն կլիմային համեմատ, պէտք է գործողութիւնը կատարել, որչափ որ կարելի է, փետրվարէն ապրիլ, և կամ աւելի ճիշդը, երբ գետնախնձորներուն վրայ բուրդները յայտնապէս տեսնուին: Աւելի կանուխ, թէև յաջողութիւնը ապահով է, բայց այն ատեն հարկ կ'ըլլայ խառնուրդը աւելի ուժով բռնել, որով գետնախնձորները կ'այրին: Դիւրութեամբ և չուտութեամբ գործելու համար, լեցուցէք գետնախնձորները կողովի մը մէջ և այնպէս ընկղմեցէք խառնուրդը պարունակող տակառին մէջ:

4.—Գործողութիւնը մեծ քանակութեան վրայ կատարելէ առաջ, պէտք է կանխափորձ մը ընել՝ խառնուրդին խտութեան աստիճանը որոշելու համար. ուստի՝ պէտք է առնուլ 3 փոքր ամաններ (փայտէ կամ հողէ) և պարաստել հր.ին 1, 1.5 և 2 երեք տարբեր խտութեամբ խառնուրդներ այդ ամաններուն մէջ. և իւրաքանչիւրին մէջ ընկղմել 20—50 գետնախնձոր, 10—12 ժամ յետոյ պէտք է հանել խառնուրդին մէջէն և չորցնել: 3 օր յետոյ, աչքերուն ուղղութեամբ կտրտելով գետնախնձորները, անմիջապէս յայտնի կ'ըլլայ եթէ աչքերը անկենդանացած են, և թէ խառնուրդներէն ո՞րը աւելի յարմար պիտի ըլլայ, թէև եթէ քիչ մը ուշադրութեամբ նկատուի, գետնախնձորներուն վրայէն ալ կը հասկնուի խառնուրդին ազդեցութիւնը: Հի-

մա ըսողներ կամ մտածողներ պիտի գտնուին անշուշտ թէ այս եղանակաւ պահուած գետնախնձորները իրենց հետ միացած ԹԹՈՒՆ հետեւանօք կիզիչ թունաւոր յատկութիւն մը պիտի ստանան, որով՝ գործածութեան մէջ իրենց օգտակարութիւնն ալ կասկածելի պիտի ըլլայ: Բայց այնպէս չէ. վստահ եղեք թէ 1 կամ 2 առ հարիւր ծծմրային ԹԹՈՒՆ բուրդովն անվնաս է, կրնաք ձեռքերնիդ մէջը միւսել և երկար ատեն կենալ առանց վնասուելու, խմել մինչև իսկ պարզ լեմոնատի մը պէս: ԹԹՈՒՆ կեղեւին վրայ միայն կը ներգործէ իր կիզիչ ազդեցութիւնը, որ այն ալ կերակուր պատրաստելու համար կը հանուի. կենդանեաց տրուած ժամանակ պէտք չէ հանել, և վստահօրէն կրնաք կերցնել անոնց: Եւ արդէն Մ. Սքոփսօ հաշիւ ըրած է որ 1 քիլոյիրամ գետնախնձորը հարիւրին 2 թըթուախառն հեղուկին մէջ 12 ժամ թողնով, հազիւ 30 հարիւրորդակուամ ԹԹՈՒՆ կը ծծէ: Այս քանակութիւնը այնչափ տկար է, որուն վրայ մտածել իսկ չարժեք և դուք, երբ ուզէք կրնաք վստահօրէն փորձել:

Ղ. ԲՈՒԱՏ

ՀԱՐՏԱՐԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ՆԵՐԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հանրագիտակի յարգոյ բաժանորդներէն շատեր թախանձանօք խնդրած էին, և կը խնդրեն մեզմէ, այլեայլ գոյներով բամպակ, բուրդ, մետաքս ևն. ներկելու գիւրին, նոր՝ կամ լաւ ևս, եւ լողական ընտրելագոյն գրութիւններու վրայ տեղեկութիւններ տալ իրենց. եւ մենք խոստացած էինք իրենց այս փափաքին գոհացում տալ, որու կը ձեռնարկենք ահա այսօր. Դժուարին աշխատութիւն մ'է զոր կ'ստանձնենք, սիրով սակայն, և պիտի ջանանք, ինչպէս մեր նպատակն է, և մեզի սկզբունք ընտ-

րած ենք, որչափ միջոցները ներեն, հիմնական կերպով ուսուցանել, և ըստ կարելոյն մանրամասնօրէն ուսումնասիրութիւններ կատարելով, բացատրել զժողովին և քօղի տակ մնացած արհեստական գաղափարները:

Անշուշտ՝ մեր յարգւոյ բաժանորդներէն անոնք որ աւելի պիտի օգտուին մեր այս ծառայութենէն, պիտի հաճին փոխադարձաբար նոր նոր բաժանորդներ գտնալ Հանրագիտակի, առ ի քաջալերութիւն մեզ, որպէս զի մենք ալ գոհ սրտով չարունակենք:

Փոխանակ այս կամ այն գոյնի արտադրութեան վրայ ուրոյն գաղափարներ տալու մեր ընթերցողաց, ինչպէս վերը ըսինք, մինակ ինդիքը հիմնական կերպով ձեռք պիտի առնենք. և ասոր համար թերթիս մէջ ներկարարութեան վրայ կանոնաւոր դասընթացք մը պիտի բանանք այսուհետեւ, ուր պիտի խօսինք առհասարակ ընդհանուր կանոններու վրայ: Պիտի բացատրենք մասնաւոր կերպով ներկարարութեան քիմիական գործողութիւնները, որոց ծանօթութիւնը անհրաժեշտ է վարպետ ներկարար մը ըլլալու, և անոնց ոգնութեամբ է որ, ներկարար մը կարող կ'ըլլայ սա կամ նա գոյնը քիչ թէ շատ յաջողութեամբ յառաջ բերելու, նմանցնելու կամ յարմարցնելու, և կամ սարքեր գոյներու բաղադրութեամբ նոր երանգներ (չէշիտ) արտադրելու: Գործածած նիւթերու քիմիական և ֆիզիքական յատկութիւններուն ծանօթանալով, ի հարկին կը գործածէ զանոնք, դիմացկունութիւն, փայլունութիւն ևն. յառաջ բերելու:

Ահա այս կերպով կը յուսանք թէ, փոքր ինչ ծառայութիւն մը մատուցած կ'ըլլանք հայ ներկարար արհեստաւորին, և հետեւաբար երկրի զարգացման ալ մասամբ նպաստած: Թէեւ մեր այս դասընթացք քիչ մը երկար պիտի տեւէ, բայց նպատակին օգտակարապէս պիտի ծառայէ, հիմնապէս եւ ուղղակի կեր-

պով պիտի պատասխանէ. ուստի՝ կը խնդրենք որ համբերութեամբ և մանաւանդ ուշադրութեամբ հետեւին մեր այս դասընթացքին՝ անոնք որ կը շահագրգռին ներկարարութենէ:

Փափաքելի էր որ, ներկարարութեան մէջ գործածուած արհեստական գաւառական բառերու մասին գաւառացիք մեզի տեղեկութիւն տային, որով՝ մասամբ մեր աշխատութիւնը դիւրացնելու նպատակով պիտի ըլլային, երկար բացատրութիւններ տալէ ազատելով զմեզ, և թէ իրենց հասկնալի ըլլալով, ամէն կերպով օգտուած պիտի ըլլան մեր այս դասերէն: Թէեւ այս մասին քանիցս հրաւեր ալ կարգացինք, բայց մեր այդ հրաւեր անլսելի մնաց: Հիմա որ առիթը ներկայացաւ, կրկին կը խնդրենք ձեռքնհասներէ, իրենց՝ և իրենց հայրենակիցներու շահուն և օգտին համար, որ հաճին, գէթ առ այժմ՝ ներկարարութեան մէջ գործածուած ամաններու, գործողութեանց, գործիքներու ևն. անունները հաւաքելով զրկել մեզ:

Սկսելէ առաջ պիտի փափաքէի թէեւ ներկարարութեան վրայ պատմական հակիրճ տեսութիւն մ'ընել, որ կը յուսամ, օգտակարութենէ զուրկ չէր ըլլար, բայց զիանալով որ շատեր ներկարարութեան գործնական մասին աւելի անհամբերութեամբ կը սպասեն քան անոր, առ այժմ զանց կ'ընենք, ուրիշ յարմար առթի մը պահելով զայն, և անմիջապէս խնդրոյն մէջ կը մտնենք:

Ինչպէս ըսինք, մինակ ներկարարութիւնը հիմնապէս պիտի սովորեցնենք մեր ընթերցողաց, այսինքն՝ ներկարարութեան քիմիագիտութիւնը. առ այս առաջնորդ ընտրած ենք մեզ Անգղիական,

(*) Մասնաւորապէս պիտի դիմենք մեր յարգւոյ աշխատակից Գաղիկ էֆ. Տէվէճեանի և Գեղամ էֆ. Ունճեանի, որոնք հաճոյակատարութեամբ պատասխանեցին մեր հրաւերին:

Ֆրանսական և գերմանական վարպետ ներկարարներու գործերը, միայն թէ՛ պիտի ջանանք ըստ կարելոյն, կարգ մը գործողութիւններ, գործիքներ եւն. մեր տեղական պահանջումներուն յարմարցընելով բացաարել, և պիտի սկսինք նախ իւրաքանչիւր հիւսուածանիւթի յատկութիւնները, այլ և այլ նիւթերու և քիմիական բաղադրութեանց՝ անոնց վրայ ըրած ազդեցութիւնները և հետեւութիւնները ուսումնասիրել, յետոյ ստանկացուցման գործողութիւնները բացատրելով, անցնիլ բուն ներկարարութեան:

ՄԱՍՆ Ա.

ԲԱՄՊԱԿ

Բամպակենին մուշներու (էպէմկէօմէֆի) ցեղին կը պատկանի, և բամպակ կոչուած սպիտակակերպ աղւաւամուտ նորաթել նիւթը կ'արտադրէ, որ տունիկն վրայ կը ծառայէ հունտերը պահպանելու:

Բամպակենին առաջուց ի վեր Փոքր Ասիոյ այլեւայլ կողմերը կը գտնուէր արդէն վայրի վիճակի մէջ. մշակութեամբ՝ այսօր աշխարհիս շատ կողմերը տարածուած է, և յառաջ բերած են անկէ բազմաթիւ տեսակներ, որոնք իրարմէ կը տարբերին երկայնութեամբ, գոյնով և դիմացկունութեամբ: Գլխաւոր տեսակներն են հետեւեալները.

1. ՊԱՌՊԱՏԵԱՆ, ԿՍՄ ԹԱԻՇՈՒՆ ԲԱՄՊԱԿԵՆԻ (Gossypium Barbadosense. Պաուստ Անթիլեան կղզիներու գլխաւորն է).—Այս տեսակին կը վերաբերի Սի-Այլընտ (Sea Island) կոչուած Անգղիական բամպակը, որ հոշակաւոր է իւր դիմացկունութեամբ, երկայնութեամբ եւ փայլով: Պաուստեան բամպակենին կը մշակուի Հարաւային Գաուլիւեան նահանգներու մէջ, Ֆլորիդի, Հիւսիսային Ամերիկայի և անգղիեան կղզիներու մէջ:

2. ԽՈՏԱԿԵՐՊ ԲԱՄՊԱԿԵՆԻՆ (G. herbaceum).—Այս տեսակը կը մշակուի գլխաւորաբար Հնդկաստանի, Չինաստանի, Եգիպտոսի Ամերիկայի, և Փոքր Ասիոյ մէկ քանի կողմերը. եւ յառաջ կը բերէ Մատրասեան, Սևասթի բամպակը Եգիպտական ինչպէս եւ տեղական կարծ բամպակը:

(Շար.)

Ղ. ԲՈՒԱՏ

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Թիւ 62.—Ձմեռը ջուրով ողողւած դաշտի այգի մը եթէ այս օրերս կարելու ըլլանք, յառաջիկային պատահելիք ցուրտերէն կը վնասուին:

Թիւ 63.—Որդալուծը կամ ատոր նման միբրալները տեսնելու համար մանրադիտակի դինը լինէ:

Թիւ 64.—Սօխը ոչնչացնող կամ ուսող միջատը արգիլելու միջոցն լինէ:

Իզմիր

Մ. Ն. ՄԻՔԱԹԷԼԵԱՆ

Թիւ 65.—Կան ծառեր, որք առանց արմատի ճիւղ մը տնկելով կը բուսնին. իսկ կան ուրիշներ՝ որ առանց արմատի չեն բուսնիր, ինչպէս են Աքաւիա, Բալենի, Կեռասենի և այլն: Ինչ միջոց գործածելու է որ պարզ ճիւղ մը տնկուած ատեն բռնէ և տերեւ արձակէ:

Էրզրում

ԵԴ. Տ. ԱԶԱՐԵԱՆ

ՊԱՏԱՍԻԱՆ

ԹԻԻ 62

Այգիին կարելի է յօտել (պուստամբ) աշունէն մինչև գարուն, երբ բուսականութիւնը հանգստեան մէջ կը գտնուի: Կանոնաւ թէ ուշ յօտելը ազէկ է, այս մասին շատ մը փորձեր կատարուած են թէև, բայց հետեւութիւնը անորոշ մընացած է: Միայն թէ՛ ուր որ ձմեռը սաստիկ կ'ըլլայ, առանց կասկածելու, պէտք է որթատունկերը յօտել գարնան, որպէսզի սաստիկ ցուրտէն չի վնասուին. մեծ սառուցումներու ատեն երբեք դըպելու չէ անոնց, որովհետև ցուրտը անոնց կտրուած տեղերէն ներս թափանցելով տունկը կը սառեցնէ և կը չորցնէ: Հիմա դուք կ'ուզէք հասկնալ թէ, ձմեռը ջրով ողողուած այգիին կանոնաւ թէ ուշ յօտելը նպաստաւոր կ'ըլլայ, մեր վերի ըսածներէն կրնաք հետեցնել թէ այդ տեսակ պարագաներու մէջ նախադրուածութեան համար, պէտք է տելի գարնան մօտ յօտել, երբ արդէն զօրաւոր սառուցումներէ վախ չիկայ:

ԹԻԻ 63

Լաւ մանրագիտակ մը կրնայ առնուիլ 3 ոսկիէն մինչև 10 ոսկի։ Որթալուիճը քննելու համար վերի վերոյ 1 ոսկինոց մանրագիտակն ալ կը բաւէ։ Ի մօտոյ ընտիր տեսակներուն վրայ ձեղի մանրամասն տեղեկութիւն կուտանք, երբ շերամաբուծութեան դասընթացքին մէջ մանրագիտակներու գործածութեան և իր տեսակներուն վրայ գրենք, զոր պիտի սկսինք մակաբուծային հիւանդութիւնները վերջանալէն անմիջապէս յետոյ։

ԹԻԻ 64

Ճանճի ցեղ մը կայ, որու (բանջարեղինաց ճանճ) անունը կուտան, և 200 տեսակէ աւելի է, ասոնցմէ երկու տեսակները կը կոչուին «սոխակեր ճանճ» և «կրծակեր ճանճ»։ Ասոնք իրենց հաւկիթները կ'ածեն սոխի բոյսերուն բոլորտիքը, և իրենց թրթուրները հողին մէջ մտնալով, առաջինը սոխին կեղեւներուն մէջ կ'ապրի, կրծելով և արահետներ բանալով։ Իսկ երկրորդը սոխին մինչև կուրծքը կ'իջնէ, և այսպէս երկուքն ալ իրարմէ ոչ նուազ վնասակար կ'ըլլան։ Երկուքին ներկայութեամբ ալ, սոխին տերևները կը դեղնին, կը չորնան և հետեաբար սոխին կոծղեզն ալ կ'ոչնչանայ։ Դժբաղդաբար ցարդ ուէ աղդու միջոց մը գտնուած չէ անոնց առաջը առնելու համար, բացի հետեւեալէն, որ շատ անգամ գոհացուցիչ կերպով յաջողած է։

Այդինները ծծմբելու փրօցի մը մէջ լեցուցէք փոշիացած գած (ալչը) և մայիսի 10էն մինչև 20, սոխի ածուները դաճոտեցէք, յետոյ չոր եւ սաք օր մը առաւօրէն ջրեցէք այդ գաճոտուած ածուները։

ԾԱՆ. ԹԻԻ 65 հորցումի պտտասխանը երկտը ըլլալուն, մօտաւորապէս մասնաւոր յօդուածով։

ԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ԽՆԴԻՐ ԻԲ.

Մէկէն մինչև 12 թուոց քառակուսիներուն (1. 4. 9. 16...144) գումարը քանի՞ կ'ընէ։

Պատասխանը 650 է. մեր պահանջածը տարազն է։

Տ. ՊՕՋԱՃԱՆ

ԺՁ. Թուաբանական խնդիրը ճշգրտէս լուծած են. Գ. Եղուարդ Տ. Պօղաճեան Արապկիրէն. և Օր. Սրաքսի Տէր-Մեքորպեան Բերայէն։

Առաջին անգամն է որ գիտական խնդիրները լուծողներուն մէջ օրիորդի մը անունը կ'արձանագրենք, որուն հայրը Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ բարեկրօն Տ. Մեքորպէսն է. այս առթիւ Հանրագիտակ իր խնդակցութիւնը կը յայտնէ։ Իսկ գալով թերթիս յարգոյ աշխատակից բազմադիւն թուաբան Տիգրան էֆ. Պօղաճեանի որդւոյն յաջողակութեանը, ինչ որ ալ քսենք, աւելորդ պիտի նկատուի, քանի որ այս տեսակ պարագաներու մէջ ժառանգականութիւնը մեծ դեր կը խաղայ, և տարակոյս չի կայ որ բազմահմուտ թուաբանին զուակն ալ օր մը տաղանակարգ թուաբան կամ հաշուագէտ ըլլալու այժմէն տրամադրութիւն ցուցնէ։

Քանի որ առիթ ունեցանք Գիտական խնդիրները յաջողակութեամբ լուծողներու հանդէպ մեր շնորհաւորութիւնները յայտնելու, չենք մոռնար նաև Պ. Երուանդ Տէօյիւճեան անուն ուշիմ և հանճարեղ պատանին, որ ինչպէս կը տեսնուի, խիստ շատ անգամներ արտայայտիչ ճշգրութեամբ կը լուծէ։ Պատուարեր Բարենիչ մ'ալ իրեն։

Ստացած ենք նաև ասոնցմէ վերջը առաջարկուած խնդիրներու լուծումներ, ուրիշ Օրիորդներու կողմէ ղրկուած զորս պիտի արձանագրենք իրենց կարգին։ Առ այս կը կանխենք մեր շնորհաւորութիւնները նաև իրենց մտացիութեան համար։

Կը խնդրուի մեր Պատ. Գործակալութիւններէն և Յարգոյ Բաժանորդներէն, որ բարհաճին նոր Տարիէն առաջ յետնեալ բաժնեկիները ղրկել։ Այս առթիւ կը յիշեցնենք նաև մէկ քանի բաժանորդաց այն խոստումները, զորս ըրած էին նամակով, քիչ օրէն իրենց բաժնեկիներ ղրկելու մասին։

ԱԶԳԱՑԻՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱՍԻՍ իբրեւ ազգային առաջնակարգ լրագիր՝ շուրջ կէս դարու չափ հայ մամուլին շրջանն հղովելէ և հանրութեան օգտակար ծառայութիւն մատուցանելու ջանքերովը՝ պարբերաբար այլևայլ երեւոյթներ կամ փուլեր փոխփոխելէն յետոյ. տարւոյս վերջին ամսոյն առաջին եօթնեակէն սկսաւ լայս տեսնել իբրեւ կիսամանայ Հանդէս, գեղեցիկ թղթով, նորաձոյլ տառերով, մաքուր տպագրութեամբ, ինչ ինչ պատկերներով, հմտական գոյնզգոյն ուսումնասիրութիւններով: Ամէն կարգի ընթերցողաց յանձնարարելի և ազգին բանասիրական դասէն գնահատելի:

Կը շնորհաւորենք նոր «Մասիս»ի երիտասարդ Խմբագրապետ-Տնօրէնը՝ Տիար Միքայէլ Շամոսեան, որ՝ իբրեւ գերմանական Համալսարանի աւարտավարժ ուսանողներէն մին՝ որպէս կը հաւատտեն զինքը անձնապէս ճանաչողը, գիտցածն ու կրցածը պիտի ընէ աւելի պայծառօրէն փայլեցնել իւր ընթերցողաց ծանօթ գերմանամարզ տաղանդը, և առաջ «Մասիս»ի արդի տիտղոսներուն աւելի համաձայն փափաքելի ու գնահատելի ուղղութիւն մը, որուն սրահ բաղձալով կը մաղթենք ամէն յաջողութիւն և արդիւնաւոր յարատեւութիւն:

—Քաղ. Ժողովը իր վերջին նստին մէջ Բերայի թաղ. Խորհրդի հրաժարած ութ անդամներու տեղ նորեր կարգեց որով ամբողջացաւ անդամներուն թիւը:

—Ուշիոյ մէջ որբանոց մը հաստատուեր է, ուր բաւական թուով որբեր ընդունուեր են:

—Առևտրական հրապարակի վրայ ծանօթ եւ պատուաւոր վաճառականներէն՝ Ազն. Սեդրակ էֆ. Յ. Մուրատեան, —անդրանիկ որդի ողբացեալ Մուրատեան Յակոբ էֆէնտիի, — որ խընամեալ կրթութիւն առած և զարգացած երիտասարդ մէ, այս անգամ Աղեքսանդրիոյ մէջ ալ ընդարձակ վաճառատուն մը հաստատած ըլլալով, նախորդ օրը ողջամբ մայրաքաղաքս վերադարձաւ:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ՀԱԼԷՊ. — ՏԿՆ. Մ. Օ. Մ. — Շնորհակալութեամբ ստացանք նամակնիդ, բայց ժանտրդ արձանագրեցինք Վայելչազարդութեան բաժնին ձեր ներկայացուցած անձերը: Իրաւունք ունիք, բայց ինչպէս թերթիս մէջ մէկ քանի անգամ գրեցինք պէտք է որ անպատճառ բաժանորդաց թիւը լրանայ, որպէս զի մենք ալ վրատահօրէն ձեռնարկենք այդ Վայելչազարդութեան բաժնին. լաւ է անագանքան երբեք:

ԳԱՐԹԱԼ. — Ե. Յ. Էթմէքեան. — Ստացած ենք նամակնիդ և պարունակութիւնը, շնորհակալութեամբ:

ՍԱՄՍՈՆ. — Ա. Գ. Բէչէճեան էֆ. — Ստացած ենք նամակնիդ:

ՄԱՆԻՍԱ. — Գործակալութիւն. — Ստացանք նամակնիդ և քաղթերնիդ. բաժանորդ արձանագրած ենք ձեր ներկայացուցած անձինք. ի մօտոյ նամակ կըստանաք:

ԿԻՐԱՍՈՆ. — Գործակալութիւն. — Այն ատեն հաճեցէք իւր քով գտնուած Հանրագիտակի թերթերը յետոս պահանջել, և յարմար առիթով մը մեզ վերադարձնել:

ՊԻԼԷՃԻԿ. — Խ. Տ. Յակոբեան էֆ. — Պակասը զրկուեցաւ:

ԻԶՆԻՄԻՏ. — Գործակալութիւն. — Նամակ կ'ստանաք. զբաղումներուս պատճառաւ ետ մնաց:

Ի դիմաց ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ կ'ստորագրէ մի միայն Տնօրէն-Խմբագրապետ Ղ. ԲՈՒԱՏ, որու դիմել պէտք է, առանց բացառութեան, թերթիս վերաբերեալ ամէն գործառնութեանց համար:



ՀԱՃՈՅՔ ՄԸ

ՈՐ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ ԿԸ ՊԱՏՃԱՍԻՑ

Ճշմարիտ հաճոյքն այն է որ, ախորժելի ժամանց մը ընծայելով հանդերձ, առողջութեան ալ մեծապէս կ'օգնէ: Ներկայ դարուս մէջ հաճոյքի նիւթերը բազմաթիւ են. սակայն զարգացած ազգեր ամենէն աւելի թիցին նախապատուութիւն կուտան, անոր համար որ, այս թանկագին ըմպելին ամենածանր յոգնութիւնները շուտով կ'անցնէ և նոր կօրով կը ներշնչէ, մարդուս ձգած աշխատութիւնը վերսկսելու: Ձմեռը արիւնը տաքցնելով, մարտինը ցուրտին դէմ կը պաշտպանէ: ամառն ալ զովութիւն ընծայելով, շատ մը հիւանդութեանց առաջը կ'առնէ: Խնամով պատմրտուած դաւաթ մը թէյը, նոյնչափ մսի: Զուրի հաւասար սնունդ կը պարունակէ և իր անբաղդատելի ածնութեամբ կատարեալ նախախնամութիւն մըն է մարդկութեան համար: Սակայն աւանդ որ թից անուամբ ծախուածներու մեծագոյն մասը խարդախուած ըլլալով, զուրկ են այս առաւելութիւններէն և զանոնք ճանչնալն շատ դժուար է, ուստի անոնք որ կը փափաքին ԸՆՏԻՐ. ԱՆՆԱՐԴԱՆ և միւնոյն ատեն ԱժԱՆ թէյ խմել, պէտք է ԿՀ ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԸՆԿԵՐՑ թէյերը գործածեն. ուշադրութեամբ փրնտուելով անոնց անունն ու մասնանիշը տուփերու վրայ: Որովհետեւ թէյի այս մեծ վաճառատուն, իւր երկարամեայ փորձառութեամբ, արեւելեան երկիրներէ մեծ ութանակ թէյ տրտածելուն և ահագին ուղիւնքներ ուղարկելուն ջնորհիւ, միշտ անխարդախ թէյ կը ծախէ ԱՆՄՐՑԵԼԻ գիներով: Ընկերութեան Կեդրոնատեղին է Կ. Պօլիս, Ճէլալ Պէյ խան, Թիւ 10:

ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆԸ կը ծանուցանէ թէ Մանկավարժական Գերականութեան Գ. մասը տպագրութեան յանձնուած է:

Մայսթերոսչաֆթ Սիսթէմի Գաղղիերէն մասի ԺԱ. տետրը հրատարակուած է և բաժանորդագրութիւնը փակուած է:

Դին 12 տետրերու 25 շրուշ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոյսոյ եւ Դաւառաց համար	
Հանրագիտակ տարեկան	50 շրշ.
» Վայելչազարդութեան բաժինով	80 »
Հանրագիտակ միայն Վայելչազարդութեան բաժին	60 »
Հանրագիտակ Վայելչազարդութեան բաժին գունաւոր եւ մեծադիր 36 պատկերներով	110 »
Արժանահմանի համար	
Հանրագիտակ տարեկան	15 ֆր.
» Վայելչազարդութեան բաժինով	20 »
Հանրագիտակ միայն Վայելչազարդութեան բաժին	16 »
Հանրագիտակ Վայելչազարդութեան բաժին գունաւոր եւ մեծադիր 36 պատկերներով	25 »

ՀԱՆԱՆՈՒԹԵԱՆ ԳԻՐ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ՎԱՅԵԼՉԱԶԱՐԴՈՒԹԵԱՆ ԲԱԺԻՆԻՆ

Ղ. ԲՈԼԱՏ

Խմբագրապետ Հանրագիտակ Հանդիսի

Թիւ 19 Էսկի-Ջազթէյէ

Կ. Պոլիս

Տէ՛ր.

Գնահատելով Ձեր հանրօգուտ ձեռնարկը, աճեցէք դիւ բաժանորդ արձանագրել թերթիդ վայելչազարդութեան բաժնին և

Ստորագրութիւն
(Ընթերցելի)

1898

Բնակութեան տեղ

Հասցէ

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ

Կը խնդրուի թերթիս հետ առնչութիւն ունեցող ամեն անձերէ (գործակալ, բաժանորդ, ևն.) որ բարեհաճին իրենց թղթակցութիւնները ուղղել հետեւեալ հասցէին, ԱՌԱՅ ՌԻՐԻՇ ՈՒԵԻ Է ՄԻՋ-ՆՈՐԴԻ. հակառակ պարագային, եթէ անպատեհութիւններ տեղի ունենան, ամեն գանգատ անլսելի մնալով, պատասխանատու չենք ըլլար:

در علیہ دہ ہفتہ قوسہ اندہ اسکی ضبطیہ دہ
صوباجی پارسغ افدینک ۱۹ نومرو لی دکانسہ
«مجموعہ علوم» غزنی سر محرری (بولاد) افندی بہ

Ղ. Բոլատ Տնօրէն-Խմբագրապետ
«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԻ»

19. Էսկի-Չապթիյէ, Պաղչէ-Գափու
Սթամպուլ

H. Polad Rédacteur en chef du journal
"HANRAKIDAK,"
Chez M. Parsegh Hazarossian
19. Rue Eski-Zabtié Bahdjé-Kapou. 19
Stamboul

ՄԵՍ ՄԹԵՐԱՆՈՑ ԴԵՂՈՐԷԻՑ

Լ. ԱՐՄԼԱՆԵԱՆ ԵՒ Ս. ԷՄԻՐՁԻ

Կ. ՊՈԼԻՍ ՖՆՏԲԼԵԱՆ ԽԱՆԻ ՏԱԿ ԹԻԻ

Սոյն վաճառատուն պատրաստ է մատակարարել մեծ ու փոքր քանակութեամբ ամեն տեսակ թարմ դեղորայք, վիրաբուժական գործիքներ, Անգղիական և Գաղղ. պատրաստ դեղեր, զօնեակներ, գինիներ և հանրային շուրերու մեծ մթերք մը, յարմար գներով: Լ. Արսլանեան և Ս. Էմիրզէ Ընկերութիւնը երկարատեւ անձնական փորձառութիւններ ունին: Ամեն ջանք և աշխատութիւն չեն խնայեր իրենց յաճախորդներն գոհացրելու համար, մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրենք գաւառաց համար, որոնց կը զրկեն դեղորայք, ամենայն արագութեամբ, թարմ և մատչելի գներով:

ԳՈՐԾԱԿԱԼՔ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԻ

Ասա-բազար — Ստեփան էֆ. Սափրիչեան
Արաբկիր — Գ. Տէվէճեան էֆ.
Էրզնում — Եղ. էֆ. Տ. Ազարեան
Թեհրան — Կարապետ էֆ. Բաբարեան
Իզմիր — Կարապետ էֆ. Մալէճեանեան
Իզմիս — Աբրահամ էֆ. Կ. Կտաւճեան
Մալկարա — Վ. Մանուկ էֆ. Չօլաքեան
Խարբերդ — Խոսրով էֆ. Քէչիչեան
Թեհպոլի. — Գալուստ էֆ. Գըլճեան
Սինույ. — Յ. էֆ. Պետրոսեան

Կիրասուն. — Կրտսէն էֆ. Սօմունճեան
Մարաշ — Արթ. Տ. Յալալեան քահանայ:
Վարժապետեան
Մանչեսթր — Յակոբ էֆ. Բոլատեան
Պանսքումա — Առնէստ էֆ. Ս. Մսերեան
Սրվազ. — Յ. Էր. Տեհապոլիչեան
Տրապզոն. — Սահակ էֆ. Էթմէճեան
Կիլիպօլու — Յովսէփ էֆ. Տէր-Յովսէփեան
Մանիսա. — Մկրտիչ էֆ. Էրկանեան
Աֆիոն-Գարա-Հիսար. — Արտաշէն էֆ. Հալալեան

Հանրագիտակ կը ծախուի ամեն լրագրավաճառաց քով, մասնաւորաբար
Մազրի-Գիւղ, Պօղոս էֆ. Ազնաւորեանի խանութը:
Գատը-Գիւղ, Լեւոն էֆ. Չպուքճեան Դեղարանը:
Բերա, Դեծ փողոց Գառնիկ էֆ. Կիւլէրեանի խանութը: